REPUBLIC OF ARMENIA
COMPETITION PROTECTION
COMMISSION

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОМИССИЯ
ПО ЗАЩИТЕ КОНКУРЕНЦИИ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«25» 04 2023թ.

No 003486

**«ՌԱՅԴՏԵԽ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ Բ.Վ.»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ**
*(Հասցե՝ Նիդերլանդներ,
Ամստերդամ, Սչիփհոլ Բուլվար 165, 1118ԲԳ
Սչիփհոլ)*

**«RIDETECK INTERNATIONAL
B.V.” LLC**
*(Address՝ Netherlands, Amsterdam,
Schiphol Boulevard 165, 1118 BG
Schiphol)*

Հարգելի՛ պարոն/տիկին,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի ապրիլի 18-ի ««Յանդեքս Սնունդ ԷյԷմ», «Յանդեքս.տաքսի ԷյԷմ», «Ռայդտեխ Ինթերնեյշնլ Բ.Վ.» և «Ֆուդտեք ընդ Դելիվերի Բ.Վ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02976/22 վարույթով «Յանդեքս Դելիվերի ԷյԷմ», «Ֆուդ Դելիվեռի1» և «Յանդեքս Եդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին որպես նոր պատասխանողներ ներգրավելու և վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 180-Ա որոշման պատճենը:

Dear Sir/Madam,

The Competition Protection Commission of the Republic of Armenia (hereinafter – the Commission) has adopted Decision № 180-A «On involving «Yandex Delivery A.M.», «Food Delivery1» and «Yandex Eda» limited liability companies as new respondents and extending the term of the proceeding in the scope of proceeding № HG-02976/22 on «Yandex Snund A.M.», «Yandex Taxi A.M.», «Ridetech International B.V.» and «Foodteck & Delivary B.V.» limited liability companies», dated on April 18, 2023.

Միաժամանակ հիմք ընդունելով վարչական վարույթի շրջանակում գործի փաստական հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել 2021 թվականի հունվարից մինչև 2023 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում «YandexGo» ծառայության վրա որպես վեբ դիտում այլ ծառայությունների տեղադրման վերաբերյալ կնքված և գործող պայմանագրերի, համաձայնագրերի, դրանց փոփոխությունների պատճենները:

Կից ներկայացվում են Թիվ 180-Ա որոշման պատճենը, ինչպես նաև Հանձնաժողովը 2022 թվականի նոյեմբերի 8-ի ««Յանդեքս Սնունդ ԷյԷմ», «Յանդեքս.տաքսի ԷյԷմ», «Ռայդտեխ Ինթերնեյշնլ Բ.Վ.» և «Ֆուդտեք ընդ Դելիվերի Բ.Վ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 426-Ա որոշման (այսուհետ՝ **Թիվ 426-Ա որոշում**)՝ «Ռայդտեխ Ինթերնեյշնլ Բ.Վ.» ընկերությանը հասցեագրված ծանուցման (այսուհետ՝ **Ծանուցում**) հետադարձ ծրարի պատճենը:

Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն Օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ կետի՝ Ծանուցումը հրապարակվել է www.azrarar.am կայքում և հասանելի է https://www.azdarar.am/announcments/org/239/01214836/ հղումով:

Based on the necessity of a full, comprehensive and objective consideration of the factual circumstances of the case within the framework of the administrative proceeding and guided by Part 2 of Article 43 of the RA Law «On Protection of Economic Competition» (hereinafter - the Law), we ask you to submit to the Commission within 5 working days from the date of receipt of this letter the copies of signed and valid contracts, agreements, amendments to them on the installation of other services as a web-view on the «YandexGo» service in the period from January 2021 to April 30, 2023.

Enclosed the copy of the Decision № 180-A, as well as the copy of return envelope of notification (hereinafter – the Notificaion) of Decision № 426-A (hereinafter – Decision № 426-A) «On initiating proceeding against «Yandex Snund A.M.», «Yandex Taxi A.M.», «Ridetech International B.V.» and «Foodteck & Delivary B.V.» limited liability companies on offence in the field of economic competition» adopted on November 8, 2022 addressed to «Ridetech International B.V.» company.

Meanwhile we are informing, that pursuant to point 11 of Article 45 of the Law, the Notification has been published in www.azrarar.am webpage and is available at https://www.azdarar.am/announcments/org/239/01214836/.

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

4. Օրենքի 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական

We are informing also, that:

1. Pursuant to Part 2 of Article 31 of the Law «On Normative Legal Acts», the period calculated in years, months or days starts from the day following the event of the calendar year, month, date or event that determined the beginning of its period.

2. Pursuant to Part 4 of Article 43 of the Law, based on the substantiated motion of an economic entity, the time limit for submitting information prescribed by a letter of the Commission Chairperson or a decision of the Commission may respectively be extended by a letter of the Commission Chairperson or a decision of the Commission, and the information shall be subject to submission within the mentioned time limit.

3. Pursuant to Part 6 of Article 43 of the Law, an economic entity may challenge the lawfulness of requesting by the Commission documents, materials and other information only in case it is not provided, within the framework of challenging the decision on imposing a sanction by the Commission.

4. Pursuant to Part 9 of Article 93, the amount of a fine imposed for failure by a respondent economic entity in the proceedings to submit, within the prescribed time limit, the documents or other information prescribed by a letter of the Commission Chairperson or by a decision of the Commission or by the

տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը, իսկ մի քանի խախտումների դեպքում՝ դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

5. Ընկերությունը Թիվ 180-Ա որոշումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում Ընկերությանը վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով, ընդ որում, արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

6. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից

legislation or for submitting inaccurate or incomplete information shall constitute up to the amount of the fine defined for the offence examined in the proceedings, and in case of several violations — the amount of a more severe fine defined therefor.

5. Within a period of two weeks after receiving the Decision № 180-A, the Company may — in case of admitting the fact of commission of the offence attributed thereto and having eliminated the consequences of the offence — file with the Commission a motion on administering expedited proceedings. Besides, when imposing a sanction as result of administering expedited proceedings, the sanction may not exceed one third of the most severe sanction provided for the given offence.

6. Pursuant to Part 1 Article 94 of the Law, when imposing a sanction, the Commission shall take into account the nature, duration of the offence in question, the possible or actual impact of the offence on the competitive situation in the market or on the consumer interests, whether the violation in question committed by the economic entity was repetitive, unless five years have elapsed from the day of imposing a sanction for the previous violation, the degree of intention by the economic entity, the motives for and the circumstances of committing the offence by the economic entity, whether the economic entity accepts the fact of committing the offence

իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը: Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության համար բարենպաստ հանգամանքների ապացուցման բեռը կրում է Ընկերությունը:

for exempting from liability, the possible impact on the economic entity of the fine being imposed, the business sector of the economic entity and the history of the economic entity. Moreover, according to Article 43 of the RA Law «On Fundamentals of Administration and Administrative Proceedings», the burden of proving circumstances favorable to the Company bears the Company.

7. Պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումն իրականացվում է Հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 24-ի թիվ 31-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ:

7. The choice of liability measure and the calculation of the fine are made on the basis of the methodology adopted by the Commission's Decision № 31-N dated on January 24, 2023.

8. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

8. According to Article 479 of Criminal Code of Republic of Armenia, for falsifying, changing, destroying or concealing evidence or presenting false evidence within an administrative proceeding criminal liability is established.

9. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

9. Pursuant to Article 504 of Criminal Code of the RA, for falsifying, changing, destroying or concealing evidence or presenting false evidence within an administrative proceeding criminal liability is being established.

10. Թիվ 180-Ա որոշմամբ Ընկերության որպես Թիվ ՀԳ-02976/22 վարույթով նոր պատասխանող ներգրավելուց հետո տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշներ պարունակող գործողությունների

10. After involving the Company as new respondent of proceeding № HG-02976/22 by Decision № 180-A, the performance of actions or behavior containing the characteristics of an offense in the field of economic competition are grounds for initiating a new proceeding.

or cooperates with the Commission, grounds

կատարումը կամ վարքագծի դրսևորումը հիմք են նոր վարույթ հարուցելու համար:

11.**Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:**

Առդիր՝ «5» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԵՂԱՄ
ԳԵՎՈՐԳՅԱՆ

11.**Also be informed that you can submit and receive documents to the Commission, as well as carry out further correspondence with the Commission online, through electronic system of the Commission e-Compete (hereinafter- the System) for which you need to register in the System. For registration please enter the section "My page" on the official website of the Commission (www.competition.am), and follow the instructions to fill in the data required for personal identification.**

Enclosed «5» pages.

**Sincerely,
Chairman**

**GEGHAM
GEVORGYAN**

competition.am կայքում հրապարակման օրը՝ 5 սեպտեմբերի 2023 թվական: